ՄԱՍՆԱՎՈՐ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՎԱԶԱՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբերի 27-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 12-ին, Օշականում, Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, Վեհափառ Հայրապետը մասնավոր վարդապետական գավազանի իշխանություն շնորհեց Մայր Աթոռի երիտասարդ միաբաններ հոգեշնորհ Տ. Արսեն աբեղա Բերբերյանին և հոգեշնորհ Տ. Նարեկ աբեղա Շաքարյանին։

Ժամը 11-ին Մայր Աթոռի ողջ միաբանությունը և Հոգևոր Ճեմարանի ուսանողության մի մասը արդեն Օշականում էին։

Ղողանջում են եկեղեցու զանգերը, մինչ ժամանում է Վեհափառ Հայրապետը և առաջնորդվում եկեղեցի։

Սկսվում է «Կանոն մասնաւոր իշխանութեան»։



Վեհափառ Հայրապետը մասնավոր վարդապետական գավազանի իշխանություն է տալիս երիտասարդ վարդապետներին։

Խարտավիլակի պաշտոնը կատարում է Մայր Տաճարի լուսարար հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը։

Շարականների, աղոթքների, սուրբգրական ընթերցումների համապատասխան կատարմամբ, Վեհափառ Հայրապետը աստիճան առ աստիճան շնորհում է «աշակերտացն ճշմարիտ Բանին քարոզութեան զմասնաւորն իշխանութիւն, որ է շորս աստիճան... յօրինեալ Սրբոյն Գրիգորի Տաթևացւոյ ճշմարտութեան վարդապետի, գերահանճար հռետորի և անյաղթ ախոյենի սուրբ հաւատոյ»։

Վեհափառ Հայրապետի շնորհաբաշխությամբ թեկնածուները իրավունք են ստանում «քարոզելոյ զԲանն կենաց ողջամիտ քարոզութեամբ, յունկն հաւատացելոց», «ուսուցանելոյ զտգէտս և խրատելոյ զստահակս», պահել «զպատուէր օրինագրութեանց հարցն սրբոց, ողջամիտ վարդապետութեամբ, ըստ Հայաստանեայց Եկեղեցւոյ»։

Արդարև գեղեցիկ, իմաստալից է «Մասնաւոր վարդապետական գաւազան տալոյ» կարգը մեր Եկեղեցում։

Շնորհաբաշխության ավարտին, Վեհափառ Հայրապետը խոսում է բովանդակալից մի խրատական «Եւ դուք եղիջիք առաջի Տեառն մշակք առանց ամօթոյ և ծառայ աղնուական» բնաբանով։

Արարողություններից հետո, եկեղեցական թափորը, «Որք զարդարեցին» շարականի երգակցությամբ, իջնում է դամբարան, համբուրելու Հայ Եկեղեցու առաջին և Մեծ Վարդապետի սուրբ շիրիմը։

Ժամը 2-ին, Օշականի ուխտավորները վերադառնում են Մայր Աթոռ։

* * *

Հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետ Բերբերյանը նախապես Վեհափառ Հայրապետին էր ներկայացրել իր վարդապետական ավարտաճառը՝ «Ս. Ներսես Շնորհալու հոգևոր տաղերը» վերնագրով։

Հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետ Շաքարյանի ավարտաճառի նյութն էր «Հայ եկեղեցական իրավունքը մինչև Ը դար»։

Հոգեշնորհ Տ. Արսեն վարդապետը այժմ գավազանակիրն է Վեհափառ Հայրապետի և դիվանատան հայերեն թղթակցությանց բաժնի աշխատակից։

Հոգեշնորհ Տ. Նարեկ վարդապետը Մայր Տաճարի եկեղեցական հնությունների պահարանի վարիչն է։

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է երիտասարդ և խոստումնալից վարդապետներին և ջերմորեն բարեմաղթում, որ նրանք լինեն ճշմարտապես «մշակք առանց ամօթոյ» Աստուծո ծառայության վսեմ ասպարեզում և հայ ժողովրդի հոգևոր սպասավորության անդաստանում։